ՄԻՈՒՅԱՆ ՄԵՋ
ՏԵՍՆՈՂ ՏՂԱՆ

RASA BUGAVIČUTĖ-PĖCE

PUIKA, KURŠ REDZĒJA TUMSĀ

Ռասա Ջուգամիչուրե-Պեպե

Մթության մեջ տեսնող տղան

վեպ

Թարգմանությունը լատվիերենից՝
Նաիրա Խաչատրյանի

ԵՐԱՉ

newmag

Երևան
2025

ՀՏԴ 821.174-31 Բուգավիչուտե-Պեցե
ԳՄԴ 84(4Լատ)-44
Բ 938

Բուգավիչուտե-Պեցե Ռասա

Բ 938 Մթության մեջ տեսնող տղան: Վեպ / Ռ. Բուգավիչուտե-Պեցե.- Եր.:
Newmag, 2025.- 168 էջ:

Եկաբն անսովոր ընտանիքում ծնված տղա է: Բայց ուզում է լինել բոլորի պես՝ Школьник հնձանով պտտվել ամենուր, խաղալ Gameboy, խնամել փիսիկին, ընտիր բաճկոն հագնել, լողալ լճում և միրառատ երկտողեր ուղարկել Լիննին:

Եկաբը կույր ծնողների զավակ է, ուստի մեծ ընտրություն չունի. պետք է լինի պատասխանատու և հասկացող, արդարացնի ծնողների սպասելիքները: Ոչ, դա բնավ դժվար չէ, քանի որ գիտի, որ յոթահատակ է. կույրերի աշխարհում միայն ինքն է կարող տեսնել: Եկաբը միակն է, որ կարող է տեսնել մթության մեջ: Դժվար է հատկապես դպրոցում: Գիտակցում է, որ պարզապես ծնվել է կույր ծնողներից, և իր ամբողջ կյանքը մի անվերջ պարտականություն է:

«Մթության մեջ տեսնող տղան» գիրքը հոգեբանական, խոհաբեր և խորը սոցիալական շերտեր ունեցող ստեղծագործություն է: Նախատեսված է պատանիների և նրանց ծնողների համար:

Նա. նախատեսված է 12+ տարեկանների համար:

ՀՏԴ 821.174-31 Բուգավիչուտե-Պեցե
ԳՄԴ 84(4Լատ)-44

The book was translated and published with the support of the Latvian Literature platform together with the Ministry of Culture of the Republic of Latvia.

Գիրքը թարգմանվել ու հրատարակվել է «Լատվիական գրականություն» հարթակի և Լատվիայի Հանրապետության մշակույթի նախարարության աջակցությամբ:

Ministry of Culture
Republic of Latvia

ISBN 978-9939-482-00-2
Copyright © 2019, Latvijas Mediji

Ռասա Բուգավիչուտե-Պեցե. «Մթության մեջ տեսնող տղան»
© 2025, «Նյու Մեդ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեդ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել Latvijas Mediji հետ կնքած պայմանագրով:

«Երազ» մատենաշարի գործընկեր
YERAZ PROJECTS

Եթե քեզ սիրահարվի բանաստեղծը, դու երբեք չես մեռնի։

Միկ Էվերետ

32

Իմ կյանքը սկսվել է հանրակացարանում: Չգիտեմ՝ ձեզնից քանիսն ունեն հանրակացարանում ապրելու փորձ, բայց սխալ չհասկանաք. ես խոսում եմ 80-ականների վերջի և 90-ականների սկզբի հանրակացարանների մասին, որտեղ երիտասարդ ընտանիքներ էին ապրում: Այն հանրակացարանների մասին, որոնք հատկացվում էին երիտասարդ մասնագետներին: Նրանց մասին, ում խոհանոցն ու ապրելու տարածքը համատեղված էին. կար զուգարան, իսկ լոգարաններն ամբողջ հանրակացարանի համար ընդհանուր էին և գտնվում էին նկուղային հարկում: Հենց այդ նկուղային լոգարանների ժամանակներից ի վեր հատուկ վերաբերմունք ունեմ խոնավ բետոնի հոտի, թաց փայտե փռվածքների ու սալապատ հատակների հանդեպ: Տեսականորեն՝ տախտամածների վրա ավելի քիչ են սայթաքում, բայց ոտքերի մատները պարբերաբար դրանց էին խփվում: Հետաքրքիր է, որ հանրակացարանի լոգարաններից միայն ներքև տանող ճանապարհն եմ հիշում և բոլորովին չեմ հիշում երրորդ հարկ վերադառնալու ճանապարհը: Ենթադրում եմ՝ սրբիչով տաքուկ փաթաթված, լոգարանի գարշահոտություններից կիսաարբած, քիթս մայրիկիս կամ հայրիկիս վզի տակ մտցրած լինելու պատճառով:

Մեր տան մուտքի մոտ՝ յասամանների թփերի արանքում, նստարան կար, որի վրա միշտ ինչ-որ մեկը նստած էր՝ անկախ տարվա եղանակից: Բա ո՞նց: Անդադար փակ տարածքում թթվելն իմաստ չուներ, իսկ որևէ մեկի հետ խոսել կամ լսել աշխարհում տեղի ունեցողի մասին, միշտ էլ ավելի ցանկալի էր: Միմյանց հետ փոխանակվում էին լուրերով: Այդպես էին անում մթության մարդիկ:

Մինչև հիմա ամառներն ինձ համար թարմ լվացված սպիտակեղենի բույր ունեն, քանի որ հանրակացարանի կողքին էր գտնվում լվացքի կախոցն իր փայտե և միանգամայն անհեթեթ կիսածածկով, որի տակ անդադար ծածանվում էին սպիտակ սավանները, վերմակների ծրարները և հարևան կանանց գիշերազգեստները: Այլ հագուստի մասեր չեմ հիշում: Ընդհանրապես, այս հիշողությունը մի տեսակ տարօրինակ է գործում... Իսկ գուցե ես կախոցի շարքերի մեջ էի մխրճվում միայն այն ժամանակ, երբ փռված էին լինում միայն սավաններն ու գիշերազգեստնե՞րը: Վստահորեն, այլ տեսակի հագուստ էլ էր լվացվում... Դե՛, ասենք՝ հենց իմը: Ժամանակի հետ կախոցում ավելի ու ավելի քիչ էին լվացք փռում, քանի որ պատահում էր, որ թռցնում էին: Հետո մի որոշ ժամանակով կախոցը դարձավ երիտասարդների ծխարան և գարեջրի խմարան, որտեղ կարելի էր նաև համբուրվելու համար քիչ թե շատ հարմարավետ տեղ գտնել: Հիմա այլևս կախոցներ չկան: Վաղուց չկան: Եվ հանրակացարաններն էլ այլևս հանրակացարան չեն: Ես էլ ուրիշ քաղաքում եմ ապրում և 32 տարեկան եմ: Սակայն ամեն անգամ, երբ գնում եմ Ցեսիս ու անցնում եմ բակերի կողքով, որտեղ կան յասամանի թփեր ու նստարաններ, ինձ զգում եմ ինչպես իմ տանը, քանի որ ես այնտեղ եմ սկսվել:

— Հե՛յ, կա՛նգ առ:

— Ի՞նչ կա:

— Եկաբին չեմ լսում:

— Ե՛կաբ: Ձագո՛ւկ:

— Այդ մոտոյի գաղափարը լրիվ հիմարություն էր:

— Վե՛րջ տուր բղավոցիդ:

— Բայց այնտեղ փողոցն է: Ե՛կաբ:

— Ե՞կաբ:

— Ե՛կաք, Աստվա՜ծ սիրես, կանգնի՛ր:

Ես ընդհանրապես չգիտեմ՝ ինչպես ողջ մնացի, ինչպես մենք ողջ մնացինք՝ առանց սաղավարտի և առանց ռետինե սինթետիկ ծածկերով մանկական հրապարակների: Բայց, ահա ես: Թերևս այն ժամանակ հեծնելով, մերօրյա լեզվով ասած, իմ երկանիվ սև պլաստմասսայե նժույգը՝ սլանում էի Վալդեմարի փողոցով ցած՝ դեպի Պիեբալգա փողոց: Քամին հարվածում էր այտերիս, աշխարհը սլանում էր կողքովս, կատարյալ ազատություն էր, և ես ունակ էի ինչի ասես, միայն թե թողեք...

— Ե՛կաք,– մեջքիս հետևում հնչեց այնքան հուսահատ, որ ամենից շատ ուզում էի, որ «նժույգս» վերածվեր օդանավի և հրթիռի պես սլանար դեպի երկինք... Փոխարենը՝ ոտքերս դնում եմ գետնին և արգելակում. այնուամենայնիվ, իմ ծնողները կույր են:

Այստեղ ոչ մի առանձնահատուկ բան չկա: Ուղղակի այդպես է: Այդպես միշտ է եղել: Ո՞վ գիտի, գուցե այս աշխարհի մուտքի մեծ դարպասների մոտ մեկն անընթեռնելի ձեռագրով դա նշել էր որպես պայմանագրի X կետ, բայց իրականում այնքան էլ կարևոր չէ: Կարևոր է այն, որ նրանց՝ ծնողներիս շնորհիվ ես առանձնահատուկ էի: Ե՛ս: Հատուկ: Հատուկ, քանի որ տեսնում էի մթության մեջ:

Փոքր երեխան երջանկության քաղցր բույր ունի: Նվիրվածության, կարևորության, ինչ-որ չափով նաև անօգնականության: Երևի նաև կոնֆետների, չգիտեմ: Չնայած՝ եկաբը երբեք այնպես չի վազել, որ գլուխը քրտնի. ես երկար ժամանակ թույլ չէի տալիս նրան առանց հասկանալու, անիմաստ վազվզել: Բայց այս ամենն այնքան պայմանական է:

Սկզբում, իհարկե, հեշտ է, սկզբում գլխավորը շնչառությանն ուշադիր հետևելն է, գաղտունը շոշափելը, ստուգելը, որ չքրտնի կամ չմրսի: Լավ, այո՛, սկզբում նաև հորից բավական հեռավորության վրա է պետք պահել, որ հանկարծ վրան չպառկի, բայց մյուս հարցերում... Դե լավ, այո՛, տակաշորերը, դրանք կան ու մնում են որպես տհաճ հոգս, բայց քանի դեռ քնած է, կարելի է հանգիստ ամեն ինչ անել: Սուսուփուս: Հետո սկսում է չոչ անելը, դու էլ՝ հետը: Կարևորը, որ հատակը մաքուր լինի, և գլուխը կամ, Աստված մի՛ արասցե, քունքը չխփի անկյուններին: Դրանից հետո սկսում է ամեն ինչից բռնվել և ուզում է քայլել, բայց առանց քեզ չի կարողանում: Մանեժ ենք սարքում: Հետո էլ սկսում է ինքնուրույն քայլել, բայց դեռ ամեն ինչից վախենում է: Դե՛, այսքանից հետո ինչ-որ բան փոխվում է, և այլևս չկա ոչ վախ, ոչ արգելակներ, ոչի՛նչ, իսկ դու՝ որպես մայր, հույսդ դնում ես միայն աղոթքների և զգացողությունների վրա: Դու սկսում ես տարբերել նրա շնչառությունը, երբ, ասենք, նա ստում է կամ անհանգստացած է կամ ուրախ է: Ոչ մի գերբնական բան: Դա նման է կարտոֆիլ տապակելուն. հեշտ չէ, քանի որ ուզում ես կառավարել ամբողջ ընթացքը, բայց իրականում չես կարող, ամեն ինչ փախչում է, ձեթը ցայտում է: Այդ իմաստով ավելի հեշտ է մթերք կտրատելը և ապուրի կաթսայի մեջ գցելը: Կտրատիր, լցրու, ջուր ավելացրու, խառնիր, և պատրաստ է: Լցրու ափսեի մեջ ու կեր: Ինչպե՞ս իմանալ, թե ափսեի մեջ ինչքան է լցված: Մատով ստուգիր: Եզրի երկայնքով: Սկզբում, իհարկե, մատդ այրվում ու մրմռում է, բայց որոշ ժամանակ հետո սովորում ես... Երեխայի դեպքում էլ նույնն է: Ամեն ինչ ստուգվում է հարցերի միջոցով: Կարգավորվում է կանոններով: Ջրի քանակը բաժակի մեջ չափելու համար հատուկ սարք կա հորինված, որը դրվում է սպասքի եզրին, և երբ հեղուկի մակարդակը հասնում է դրան, այն ձայն է հանում: Երեխաների համար նման սարք գոյություն չունի, և նման մանրուքների պատճառով կյանքը կանգ չի առնում:

Ես երեխա ուզում էի. երեխան ինձ համար երջանկություն է: Սա միշտ հիշել է պետք: Եվ հարցերը փոքրիկ մարդու հետ է պետք քննարկել: Այս իմաստով եկաբն իսկական երջանկություն է:

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark